Տ. ԳՆԵԼ ԱԲԵՂԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Էդգար)

Ծնվել է 1975 թ. հունիսի 21-ին Երևանում:

1981-1990 թթ. սովորել է Երևանի Վ. Մայակովսկու անվան № 7 միջնակարգ դպրոցում:

1990-1994 թթ. սովորել և ավարտել է Երևանի Էլեկտրոմեխանիկական տեխնիկումը:

1994-1999 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում, ապա ուսումը շարունակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ջ լսարանում՝ այն ավարտելով 2000 թ.:

2000 թ. հունիսի 16-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի:

2000 թ. հուլիսի 20-ից Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ ծառայության է անցել Մայր Աթոռում որպես հյուրընկալի օգնական, իսկ 2001 թ. մայիսի 1-ից՝ որպես Մայր Աթոռի հյուրընկալ:

2001 թ. դեկտեմբերի 29-ին պաշտպանել է ավարտաճառ «Եփրեմ Ա Կաթողիկոսը և Ս. Էջմիածնի ու Ռուսաց արքունիքի հարաբերությունները (18-րդ դարի վերջ - 19-րդ դարի սկիզբ)» թեմայով:

2002 թ. ապրիլի 28-ին, Սուրբ Խաչի երևման տոնին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա: